ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# ՀՐԱՄԱՆԸ

«10» 01 2017 թվականի № 02-Ա/1

**Հ. Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԵՎ Ս. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 11.2.1 կետի «թ» ենթակետը, Հ. Հովհաննիսյանի հետ 2013 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված N 14 աշխատանքային պայմանագրի 5.1. կետի «զ» ենթակետը և Հ. Ս. Հովհաննիսյանի, Ս. Ս. Խաչատրյանի անձնական դիմումները

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Հովակիմ Սեդրակի Հովհաննիսյանին 2017 թվականի հունվարի 16-ից ազատել զբաղեցրած պաշտոնից և լուծել նրա հետ 2013 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված N 14 աշխատանքային պայմանագիրը:

2. «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Սասուն Սաշայի Խաչատրյանին և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ մինչև վերոնշյալ թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձի կողմից զբաղեցնելը:

3. «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ս. Ս. Խաչատրյանին՝ ստեղծել հանձնաժողով և սահմանված կարգով կատարել ընկերությանը ամրակցված ակտիվների և պարտավորությունների գույքագրում:

4. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի կազմակերպման աշխատանքները

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ